

«Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի

Շահառուների խորհրդի 2008 թվականի փետրվարի 8-ին ժամը 15:00-ին կայացած նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

Նիստին մասնակցում էին հետևյալ Շահառուների խորհրդի անդամները՝

Արայիկ Հովհաննիսյան	«Հայաստանի ավագանիների ասոցիացիա» ՀԿ
Վեհանուշ Հովհաննիսյան	«Մեդվիկ» մանկապատանեկան ՀԿ
Ծովինար Ղազարյան, Կարեն Նազարյանի լիազոր ներկայացուցիչ	Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան հիմնադրամ
Արշալույս Հայրապետյան, Աշոտ Ոսկանյանի լիազոր ներկայացուցիչ	«Ազրոզարգացում» ՀԿ
Հրաչիկ Ջավադյան	Կիրառական հետազոտությունների և ազրոբիզնեսի հիմնադրամ
Վանիկ Մողոմոնյան	«Ֆերմերների ազգային միավորում» ՀԿ
Հակոբ Աբրահամյան	«Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» ՀԿ
Մեյրան Մարտիրոսյան	«Ազատանի «Ազատան» համայնքային կենտրոն» ՀԿ
Լևոն Բարսեղյան	«Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ
Սամվել Սարգսյան, Տոնական Ղազարյանի լիազոր ներկայացուցիչ	«Շենիկ» ՋՕԸ
Լիլիթ Ավագյան	«Այգաբաց» երիտասարդական հետազոտական կենտրոն ՀԿ
Վիլիկ Բարսեղյան	«Արարատ» ՋՕԸ

Նիստից բացակայում էին

Արամ Սուքիասյան	«Հայաստանի երիտասարդների ազգային խորհուրդ» ՀԿ
Կարեն Նազարյան	Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան հիմնադրամ
Վարդան Համբարձումյան	«Գյուղատնտեսական Ասոցիացիաների Ֆեդերացիա» ԻԱՄ
Տոնական Ղազարյան	«Շենիկ» ՋՕԸ
Արթուր Սաքունց	«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ

Նիստին մասնակցում էին նաև

ԱրաՀովսեփյան	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրեն
Կարինե Դանիելյան	«Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ, ԿԻՄ բնապահպանական դիտորդ
Վիկտորյա Գրիգորյան	ՇԽ օգնական, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ

<b>Նաիրա Ալթունյան</b>	Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ, Հայաստան
<b>Արմեն Գիզոյան</b>	«Լարի» պանրագործների միություն
<b>Քրիստինե Հովհաննիսյան</b>	«Սպառողների իրավունքների պաշտպանություն» ՀԿ
<b>Արթուր Մարտիրոսյան</b>	«Վորլդ Վիժն» ՄԲԿ
<b>Սոնա Ալվազյան</b>	ՏԶԿ/ԹԻ Հայաստան

Նիստին ներկա էին նաև ՋԼՄ ներկայացուցիչներ

Տատյանա Սկրտչյանը, Արմինֆո,

Լիանա Եղիազարյանը, Արմենայրես,

Ալինա Օրոյանը, Հ1 «Լրաբեր»:

Նիստը նախագահելու համար առաջարկվեց ՇԽ անդամ Հրաչիկ Ջավադյանի թեկնածությունը և միաձայն հաստատվեց: Նախագահողն առաջարկեց հաստատել օրակարգը: Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը՝

1. 15:00 ՀՄՀ-Հայաստան ծրագրի առաջընթացի արդյունքների ներկայացում (ՇԽ նախորդ նիստից առ այսօր ընկած ժամանակահատվածի համար)  
*Արա Հովսեփյան, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրեն*
2. 15:30 Կառավարման խորհուրդ պատվիրակված ՇԽ անդամների մասնակցության և իրականացրած աշխատանքների համառոտ ներկայացում (ՇԽ նախորդ նիստից առ այսօր տեղի ունեցած ԿԽ նիստերի վերաբերյալ)  
*Կառավարման խորհրդի անդամներ*
3. 16:00 ՇԽ աշխատանքային պլան՝
  - ՇԽ հարցաթերթիկի արդյունքների ամփոփում
  - «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի շրջանակներում կազմակերպվելիք արտագնա այցելությունների ժամանակացույցի հստակեցում
  - Կանոնակարգային խնդրահարույց հարցերի վերհանում և ցուցակագրում՝ առաջիկայում քննարկումներ անցկացնելու նպատակով
4. 17:00 Այլ հարցեր

Օրակարգը հաստատվեց միաձայն:

### **Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ**

Հանդես եկավ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը և նշեց, որ ՇԽ նախորդ նիստից առ այսօր ընկած ժամանակահատվածում ՀՄՀ-Հայաստանը բանակցել և մեկ նոր պայմանագիր է կնքել «Ջրտուք», «Ջրաբքի» եւ «Ջինջ» ՄՊԸ-ներից կազմված համատեղ ձեռնարկության հետ: Համաձայն պայմանագրի համատեղ ձեռնարկությունը պետք է խորհրդատվական ծառայություններ մատուցի ՀՄՀ-Հայաստանի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում ոռոգման 8 ինքնահոս համակարգերի կառուցման նպատակով նախագծման և շինարարության վերահսկման ուղղությամբ:

Այնուհետև, նախագահողն առաջարկեց ներկաներին իրենց հարցերն ու մեկնաբանություններն ուղղել Ա. Հովսեփյանին, եթե կան այդպիսիք:

ՇԽ անդամ Լ. Բարսեղյանը հարց բարձրացրեց ՀՄԿ-ի կողմից տարեկան հրապարակվող երկրների ցուցանիշների վերաբերյալ. հաշվի առնելով այն փաստը, որ 2007թ. Հայաստանյան ցուցանիշները արդեն հրապարակվել են, սակայն ՇԽ-ը դրանք պաշտոնապես դեռ չի լսել և քննարկել, առաջարկվեց ՊՈԱԿ-ին առաջիկա ՇԽ նիստին ներկայացնել տեղեկատվություն-վերլուծություն Հայաստանի ցուցանիշների վերաբերյալ, որի արդյունքում ՇԽ-ը հնարավորություն կունենա ծավալել քննարկում:

ՀՄՀ-Հայաստանի ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանը նշեց, որ ՇԽ ղեկտեմբերի 13-ի նիստի ընթացքում համառոտ ներկայացվել է Հայաստանի կատարողականը (չնայած որ այն որպես օրակարգի առանձին հարց չէր ներկայացվել): Ա. Հովսեփյանը նշեց նաև, որ ՊՈԱԿ-ը պատրաստ է ևս մեկ անգամ ՇԽ-ին տրամադրելու և ներկայացնելու ՀՄԿ հաշվետվությունը, սակայն առանց որևէ քաղաքական-վերլուծական մեկնաբանությունների, ինչը հանդիսանում է ՀՄԿ գործառույթ: Այդ առիթով Ա. Հովսեփյանն առաջարկեց հրավիրել ՀՄԿ տեղական ներկայացուցիչներին, ովքեր կկարողանան ներկայացնել համապատասխան վերլուծությունը:

ՇԽ անդամները հավանություն տվեցին Հայաստանի 2007թ. կատարողականի վերաբերյալ քննարկումներ անցկացնելու առաջարկությանը. նախագահողն առաջարկեց ՇԽ առաջիկա նիստի օրակարգում ընդգրկել նաև այդ հարցը:

**Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ նախագահող Հ. Ջավադյանն առաջարկեց ի գիտություն ընդունել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ԳԳՏ Ա. Հովսեփյանի կողմից ներկայացված տեղեկատվությունը ծրագրային առաջընթացի վերաբերյալ և հավաստել, որ այն ընթանում է համաձայն որդեգրած գործունեության պլանի (ՇԽ անդամների կողմից առարկություններ չեղան):**

#### **Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ**

ԿԽ պատվիրակների աշխատանքները ներկայացնելու համար հանդես եկավ Ա. Հովհաննիսյանը և նշեց, որ ՇԽ նախորդ նիստից առ այսօր ընկած ժամանակահատվածում գումարվել է ընդամենը մեկ նիստ: Օրակարգում ընդգրված բոլոր հարցերը հաստատվել են ԿԽ-ի կողմից: Լայն քննարկումներ են ծավալվել հետևյալ հիմնական հարցերի շուրջ՝

վարկային ծրագրի տոկոսադրույքների հարցը,

պայմանագրերում փոխարժեքի տատանման ռիսկերը հնարավորինս կառավարելու հարցը:

Վերոնշյալ հարցերի շուրջ հանդես եկավ նաև ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանը և նշեց, որ վարկային բաղադրիչի մրցութային գործընթացի առաջին փուլն ավարտված է, ընտրվել են 11 կազմակերպություններ, որոնք էլ կմասնակցեն «հողանդական աճուրդին»: Ինչ վերաբերում է փոխարժեքի տատանումների ռիսկերի կառավարմանը, ապա ստացվել է ՀՄԿ-ի համաձայնությունը գնային առաջարկները ՀՀ դրամով ստանալու և համապատասխանաբար պայմանագրեր կնքելու և վճարումները ՀՀ դրամով կատարելու համար: Միաժամանակ, սահմանվել է, որ տեղական ընկերությունների կողմից գնային առաջարկը ԱՄՆ դոլարով ստանալու դեպքում, պայմանագրերը կկնքվեն ՀՀ դրամով, վճարումները նույնպես կկատարվեն ՀՀ դրամով, սակայն վճարումներին համապատասխան՝ վերանայելով ԱՄՆ դոլարի փոխարժեքի տատանումը:

ԿԽ իրականացված աշխատանքների վերաբերյալ արտահայտվեցին նաև մյուս պատվիրակները:

### **Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ**

Հանդես եկավ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանը և ներկայացրեց ՇԽ գործունեության պլանի շրջանակներում քննարկվելիք հարցերը և դրանց հիմնական նպատակը:

Կանոնակարգային խնդրահարույց հարցերի վերհանում և ցուցակագրում՝ առաջիկայում քննարկումներ անցկացնելու նպատակով ՇԽ անդամների կողմից լրացված հարցաթերթիկի համառոտ ամփոփումը (հարցաթերթիկի հիմնական նպատակն է եղել պարզել ՇԽ անդամների անհատական գործունեության ուղղությունները, նախասիրությունները և այլն) ներկայացնելու նպատակով ձայնը տրվեց ՇԽ օգնական Վ. Գրիգորյանին: Հիմնվելով հարցաթերթիկի արդյունքների և պատասխանների վրա՝ կազմվել էր առաջիկա միջոցառումների ժամանակացույցը (փետրվար-մարտ ամիսների համար), որը հիմնականում նախատեսված էր իրականացնել «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի ուղղությամբ:

Ժամանակացույցի վերաբերյալ ՇԽ անդամներն առաջարկեցին արտագնա միջոցառումների իրականացումը հետաձգել նախագահական ընտրությունների ժամանակահատվածից հետո (փետրվարի 25-ից հետո)՝ տեղական կառավարման մարմինների հետ ավելի արդյունավետ աշխատելու նպատակով:

ՇԽ անդամ Ա. Հովհաննիսյանն առաջարկեց ամբողջությամբ ամփոփել հարցաթերթիկի արդյունքները և վերջնական տեսքով ներկայացնել ՇԽ անդամներին:

ՇԽ կանոնակարգի լրամշակման վերաբերյալ նախագահողն առաջարկեց նիստի մասնակիցներին առաջ քաշել այն հիմնական հարցերը, որոնք իրենց կարծիքով ենթակա են քննարկման և վերանայման: ՇԽ անդամ Ս. Մարտիրոսյանը ներկայացրեց մի շարք հարցադրումներ, որոնք ենթակա էին քննարկման, մասնավորապես ՇԽ և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ ԿԽ անդամների նույն կամ տարբեր լինելու հարցը, ծրագրի լայն շահառու խմբերի ներկայացուցչականության հարցը, ՇԽ աշխատանքային պլանի մշակման և իրականացման մեխանիզմների հստակեցման հարցը, ինչպես նաև կանոնակարգի խմբագրման աշխատանքները:

ՇԽ անդամ Լ. Բարսեղյանը կարևորեց ՇԽ անդամների շահերի բախման դեպքերը սահմանելու և դրանցից խուսափելու մեխանիզմների հստակեցումը:

ՇԽ անդամ Ա. Հովհաննիսյանն առաջարկեց անցկացնել առանձին հանդիպում (նիստ) ՇԽ կանոնակարգի վերանայման գործընթացի ուղղությամբ:

ՇԽ անդամ Վ. Սողոմոնյանն առաջարկեց առաջիկա հանգստյան օրերին կազմակերպել արտագնա հանդիպում կանոնակարգային և այլ հրատապ հարցերի քննարկումն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով:

Առաջիկայում հակասություններից խուսափելու նպատակով ՇԽ անդամ Ա. Հովհաննիսյանն առաջարկեց ՀՄԿ-ին նախապես ներկայացնել իր դիրքորոշումը քննարկվող հարցերի շուրջ:

Ընդհանուր առմամբ, ՇԽ անդամները կողմ արտահայտվեցին վերոնշյալ առաջարկություններին:

Վերջում նիստի նախագահողն առաջարկեց ՇԽ անդամներին կանոնակարգի վերաբերյալ իրենց առաջարկությունները առաջիկայում ներկայացնել ՇԽ օգնականին և խնդրել ՊՈԱԿ-ին կազմակերպել արտագնա աշխատանքային հանդիպում՝ կանոնակարգային խնդրահարույց հարցերը քննարկելու և լրամշակելու նպատակով:

### **Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ**

Այլ հարցերի շրջանակներում ՇԽ անդամները վերհանեցին և քննարկեցին հետևյալ հիմնական հարցերը՝

#### *-«Թեղուտի» հանքավայրի շահագործման հարցը*

ՇԽ անդամ Լ. Բարսեղյանը ներկաներին հիշեցրեց 2007թ. դեկտեմբեր ամսին իր կողմից տարածած «Թեղուտի հանքավայրի շահագործման» վերաբերյալ հայտարարություն-դիմումի մասին: ՇԽ անդամներին առաջարկվել էր ընդունել հայտարարությանը, սակայն մինչ այժմ ՇԽ միայն 4 անդամներ են արձագանքել (կողմ) փաստաթղթին: ՇԽ անդամ Լ. Բարսեղյանը, չցանկանալով ևս մեկ անգամ ներկայացնել «Թեղուտի» հիմնահարցը և դրա կապը ՀՄՀ-Հայաստան ծրագրի հետ, կոչ արեց ներկաներին միանալ հայտարարությանը իրենց ստորագրություններով:

«Թեղուտի հանքավայրի» վերաբերյալ հանդես եկավ նաև բնապահպանական դիտորդ Կ. Դանիելյանը և նշեց, որ ՀՀ նախագահը, արձագանքելով «Բնապահպանական դաշինքի» կողմից ներկայացված ուղերձին, պատրաստակամություն է արտահայտել հանդիպել նախաձեռնողների հետ:

ՇԽ անդամ Վ. Սողոմոնյանն առաջարկեց նոր քննարկումներ անցկացնել «Թեղուտի» հարցի շուրջ, որպեսզի ՇԽ անդամները հստակ պատկերացում կազմեն խնդրի դրական և բացասական կողմերի վերաբերյալ և նոր միայն որոշեն միանալ հայտարարության, թե՛ ոչ: Վ. Սողոմոնյանի առաջարկության կապակցությամբ Լ. Բարսեղյանը նշեց, որ ՇԽ-ին ներկայացվել են մի շարք ուսումնասիրություններ (մասնավորապես Հ. Սանասարյանի աշխատությունը) և եղել են բավական շատ քննարկումներ «Թեղուտի» հարցի շուրջ:

#### *-ՇԽ աշխատանքների լուսաբանման հարցը*

ՇԽ անդամ Ա. Հովհաննիսյանը հարց բարձրացրեց ՀՄՀ-Հայաստանի վեր կայքում ՇԽ-ի աշխատանքների լուսաբանման պակասի վերաբերյալ և առաջարկեց ՇԽ օգնականին հետամուտ լինել նշված հարցի արդյունավետ իրականացմանը:

#### *-Ծրագրի իրազեկման հիմնախնդիրը*

Նիստը նախագահող Հ. Ջավադյանը ևս մեկ անգամ բարձրացրեց ծրագրի իրազեկման աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով «Ագրոլրատու» պարբերականում առանձին տեղեկատվական թերթիկի տեղադրման մասին: Հարցադրման վերաբերյալ Ա. Հովսեփյանը նշեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը խրախուսում է նման նախաձեռնությունները և անհրաժեշտության դեպքում պատրաստ է տեղեկատվություն տրամադրել հետաքրքրված կողմերին: Որպես օրինակ նշվեց «Հայաստանի ավագանիների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից հրապարակվող «Ավագանի+» թերթում ծրագրի վերաբերյալ պարբերական լուսաբանումները: Իրազեկման առումով ՇԽ անդամ Լ. Բարսեղյանը տեղեկատվություն հաղորդեց այն մասին, որ «Ասպարեզ» ակումբի նախաձեռնությամբ թողարկվել է տեղեկատվական ֆիլմ ՀՄՀ-Հայաստան ծրագրի վերաբերյալ և նշեց, որ առաջիկայում ֆիլմը կտրամադրի ՇԽ անդամներին:

Նիստի նախագահող՝ Հ. Ջավադյան

Քարտուղար՝ Վ. Գրիգորյան  
Փետրվարի 8, 2008